Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն 12

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքին աուդիտի կոմիտեի նիստի

13.11.2017թ.
Ժ. 10.00

ք. Երևան
ՀՀ ԱՍՀՆ նիստերի դահլիճ

Մասնակցում էին՝
Կոմիտեի նախագահ՝ Ա. Ասատրյանը
Կոմիտեի անդամներ՝ Ա. Պետրոսյանը, Ս. Սահյանը, Թ. Ավետիսյանը, Ա. Գրիգորյանը, Ս. Տերտերյանը
Բացակայում էր՝ Շ. Հարությունյանը, Հ. Մուրադյանը

Հրավիրված էին՝ Դ. Հակոբյանը, Ն. Սարգսյանը, Ռ. Սմբատյանը, Ա. Սաֆարյանը, Ա. Դանիելյանը, Ա. Մինասյանը, Ա. Մանվելյանը, Ա. Կեսոյանը, Լ. Հայրապետյանը, Ս. Զաքարյանը, Կ. Բաբախանյանը, Ե. Մխիթարյանը, Մ. Օհանյանը, Ա. Բարսեղյանը, Ա. Ավետիսյանը, Ա. Խաչատրյանը, Հ. Զաքարյանը

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար /այսուհետ՝ Նախարար/, կոմիտեի նախագահ Ա. Ասատրյանը նիստի սկզբում հղում անելով օրակարգում ընդգրկված և ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում կազմված ամփոփագիրներին՝ հստակեցրեց մասնակիցների կողմից դրանց վերաբերյալ ունեցած առաջարկությունները: Մասնակիցների կողմից օրակարգի վերաբերյալ առաջարկություններ չհնչեցին, որի արդյունքում ներքին աուդիտի կոմիտեն միաձայն **ՈՐՈՇԵՑ** հաստատել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքին աուդիտի կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 13-ի նիստի հետևյալ օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքին աուդիտի կոմիտեի 13.11.2017թ. նիստի

1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 02 խմբի 01 դասի «08. ՀՀ մարզերում միայնակ տարեցներին, հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային կենտրոններում սոցիալական սպասարկում» ծրագրի ներքին աուդիտի արդյունքներով բացահայտված խախտումների և ներկայացված առաջարկությունների մասին:

(Զեկուցող ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Ս. Տերտերյան)

2. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 02 խմբի 01 դասի «05. Տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագրի ներքին աուդիտի արդյունքներով բացահայտված խախտումների և ներկայացված առաջարկությունների մասին:

(Զեկուցող ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Ս. Տերտերյան)

3. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 02 խմբի 01 դասի «10. Վանաձորի տարեցների տանը խնամվողներին շուրջօրյա խնամք և սոցիալական սպասարկում» ծրագրի ներքին աուդիտի արդյունքներով բացահայտված խախտումների և ներկայացված առաջարկությունների մասին:

(Զեկուցող ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Ս. Տերտերյան)

4. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում ապրիլից մինչև հոկտեմբերի 15-ը համակարգի ՊՈԱԿ-ներում իրականացված գնումների գործընթացի ներքին աուդիտի արդյունքներով բացահայտված խախտումների և ներկայացված առաջարկությունների մասին:

(Զեկուցող ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Ա. Ավետիսյան)

1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 02 խմբի 01 դասի «08. ՀՀ մարզերում միայնակ տարեցներին, հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային կենտրոններում սոցիալական սպասարկում» ծրագրի ներքին աուդիտի արդյունքներով բացահայտված խախտումների և ներկայացված առաջարկությունների մասին:

(Ա. Ասատրյան, Ա. Պետրոսյան, Թ. Ավետիսյան, Ա. Կեսոյան, Ա.Մանվելյան, Ա. Մինասյան, Ա. Հարությունյան)

Ս. Տերտերյանը ներկայացնելով օրակարգի 1-ին հարցը՝ անդրադարձավ Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 02 խմբի 01 դասի «08. ՀՀ մարզերում միայնակ տարեցներին, հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային կենտրոններում սոցիալական սպասարկում» ծրագրի մասով իրականացված ներքին աուդիտի արդյունքում արձանագրված թերություններին և ներկայացված առաջարկություններին:

Ս. Տերտերյանը ներկայացրեց, որ ներքին աուդիտի արդյունքում կազմված հաշվետվությունում 1-ից 6-րդ հարցերը բովանդակային առումով վերաբերվում են ձևակերպումների փոփոխություններին, մասնավորապես առաջարկվում է ծրագրում ներկայացված «միայնակ» բառը փոխարինել «կյանքի դժվարին իրավիճակ» բառերով, որը բխում է նաև «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պահանջներից:

Սոցիալական աջակցության վարչության պետ Ա. Մինասյանը պարզաբանեց, որ «միայնակ» բառը «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում դիտարկվում է, սակայն որպես չափորոշիչ այն չի կիրառվում:

Նախարարի հարցին ի պատասխան «միայնակ» բառի ձևակերպումը փոփոխելու անհրաժեշտություն կա թե ոչ, հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ Ա. Կեսոյանը պարզաբանեց, եթե միայնակ են, ապա իրավունք ունեն օգտվելու բարեգործական ճաշարանից և ցերեկային խնամքի կենտրոններից: Տվյալ դեպքում ձևակերպման փոփոխությունը անհրաժեշտ է, քանի որ համապատասխան ծառայությունը մատուցվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց:

Նախարարի հարցին ի պատասխան Ս.Տերտերյանը ներկայացրեց, որ ծրագիրն ունի երկու բաղադրիչ՝ «միայնակ տարեցների և հաշմանդամների խնամքը տնային պայմաններում» և «տարեցների սոցիալական սպասարկման ցերեկային կենտրոններում»:

Ա. Մինասյանը հավելեց, որ առաջին բաղադրիչով միայնակ բնակվողներին ծառայություն են մատուցում, միաժամանակ նշեց, որ տնային սպասարկման հիմքում միայնակ բնակվելու հանգամանքն է դրված:

Նախարարը նշված խնդրի լուծման համար առաջնային համարեց վերոնշյալ երկու բաղադրիչների հստակ տարանջատման անհրաժեշտությունը, որի վերաբերյալ տրվեց հանձնարարական:

Նախարարի տեղակալ Թ. Ավետիսյանը նշեց, որ քննարկված հարցի լուծման նպատակով անհրաժեշտություն է առաջացել փոփոխություն կատարել «Երեխաների, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը և պայմանները սահմանելու, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N1112-Ն որոշման մեջ: Նա նշեց նաև, որ ներկայումս շրջանառության մեջ է դրվել ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծ: Նա հավելեց, որ տրամաբանություն է տեսնում այն բանի մեջ, եթե անձը միայնակ է, ապա առաջին հերթին պետք է նրան սպասարկել: Նշեց նաև, որ հարցը քննարկվել է սոցիալական ոլորտի միջազգային կազմակերպությունների հետ, առկա են դեպքեր, երբ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձը տնային սպասարկման շատ ավելի մեծ կարիք ունի, քան միայնակը:

Ներկայացնելով ծրագրի ամփոփագրով նախատեսված հաջորդ կետը՝ Ս. Տերտերյանն անդրադարձավ սուբսիդիայի տրամադրման պայմանգրի Հավելված 1-ի «կազմակերպության սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոնների» նկարագրության 3-րդ կետի «տաք կերակուր» բառերին, հավելելով որ դրանք անհրաժեշտ է փոխարինել ՀՀ կառավարության ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N 730-Ն որոշմամբ հաստատված հավելված թիվ 6-ով սահմանված «սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոններում հաճախորդներին հատկացվող սննդամթերքի» նվազագույն չափորոշիչներ» բառերով: Նշեց նաև, որ սույն հարցը կարգավորելու նպատակով 2013 թվականին իրականացված ներքին աուդիտի արդյունքում հաստատվեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2013թ. հուլիսի 26-ի N107-Ա/1 հրամանը՝ մեկ տարի ժամկետով, սակայն «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությունն /այսուհետ՝ Կազմակերպություն/ առ այսօր առաջնորդվում է նշված հրամանի դրույթներով:

Վերոնշյալ հարցի կապակցությամբ Ա. Մինասյանն առաջարկեց նշել մատուցվող ծառայությունների տեսակները և դրանք կարգավորել կառավարության վերոնշյալ որոշմամբ:

Նախարարի առաջին տեղակալ Ա. Պետրոսյանն առարկեց, նշելով որ առաջարկված տարբերակն ընդունելի չի համարում, քանի որ այդ դեպքում սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոնը կվերածվի բարեգործական ճաշարանի:

Նախարարը նկատեց, որ ներկայացված տեղեկատվության համաձայն կազմակերպությունը ծրագրի երկու բաղադրիչի փոխարեն փաստացի իրականացնում է երեքը:

Թ. Ավետիսյանը պարզաբանեց, որ բարձրացված հարցը խնդրահարույց է, քանի որ նման դեպքում ոչ մի չափորոշիչ սահմանված չէ, միաժամանակ նախատեսվում է իրականացնել նշված բաղադրիչների մրցութային տարբերակները:

Ս. Տերտերյանը նշեց նաև, որ Կազմակերպության մատուցած ծառայություններից օգտվում են ոչ միայն տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող անձինք, այլ նաև անապահովության գնահատման համակարգում ընդգրկված անձինք, ովքեր նման իրավունք չունեն: Ս. Տերտերյանը հավելեց նաև, որ Կազմակերպությունը համապատասխան ծառայությունները շահառուներին մատուցում է սոցիալական ծառայությունների տարածքային բաժինների կողմից տրված ուղեգրերի հիման վրա: Նշեց նաև, որ սոցիալական ծառայությունների տարածքային բաժինների կողմից իրականացվում է սոցիալական դեպքի վարումը և շահառուի սոցիալական անհատական ծրագրի կազմումը, սակայն Կազմակերպությանը սոցիալական անհատական ծրագրերը չեն տրամադրվում:

Ս. Տերտերյանը նշեց, որ Կազմակերպությունում խնամվում են նաև այնպիսի շահառուներ, որոնց անհատական տվյալների համադրման արդյունքում պարզվել է, որ նրանք միաժամանակ աշխատում են, որն էլ հակասում է ծրագրի պահանջներին:

2. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 02 խմբի 01 դասի «05. Տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագրի ներքին աուդիտի արդյունքներով բացահայտված խախտումների և ներկայացված առաջարկությունների մասին:

(Ա. Ասատրյան, Ա. Պետրոսյան, Թ. Ավետիսյան, Ա. Գրիգորյան, Ա. Կեսոյան, Ա. Մինասյան)

Օրակարգի հաջորդ հարցին անդրադառնալով՝ նախարարը Ս.Տերտերյանից հստակեցրեց, թե արդյոք նմանատիպ չեն արձանագրված խախտումները:

Ս. Տերտերյանը հավաստիացրեց, որ իրականում արձանագրված թերությունները նմանատիպ են և կարելի է փաստել, որ հաշվետվության մեջ ներառված առաջին երեք հարցերը արդեն իսկ քննարկվել են ներքին աուդիտի նիստի /այսուհետ՝ Նիստ/ ընթացքում:

Ս. Տերտերյանը նիստի մասնակիցների ուշադրությունը հրավիրեց տուն-ինտերնատներում բնակվող շահառուների «անկողնային հիվանդ» տերմինի վրա: Նա ներկայացրեց, որ համապատասխան հաստիքացուցակ կազմելիս հաշվի է առնվում նաև կազմակերպությունում բնակվող շահառուների «անկողնային հիվանդ» լինելու փաստը:

Սակայն դա մտահոգություն է առաջացնում, քանի որ նախարարության ենթակայությամբ գործող տուն-ինտերնատների ղեկավարների կողմից այն կարող է շահագործվել:

3. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 02 խմբի 01 դասի «10. Վանաձորի տարեցների տանը խնամվողներին շուրջօրյա խնամք և սոցիալական սպասարկում» ծրագրի ներքին աուդիտի արդյունքներով բացահայտված խախտումների և ներկայացված առաջարկությունների մասին:

(Ա. Ասատրյան, Ա. Պետրոսյան, Թ. Ավետիսյան, Ա. Գրիգորյան, Ա. Կեսոյան, Ա. Մինասյան, Մ. Օհանյան)

Նախարարը հաշվի առնելով, որ քննարկված «08. ՀՀ մարզերում միայնակ տարեցներին, հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային կենտրոններում սոցիալական սպասարկում» և «10.Վանաձորի տարեցների տանը խնամվողներին շուրջօրյա խնամք և սոցիալական սպասարկում» ծրագրերը և իրականացված ներքին աուդիտի արդյունքները նմանատիպ են, առաջարկեց քննարկել հաջորդը ծրագիրը:

Ներկայացնելով իրականացված ներքին աուդիտի արդյունքները՝ Ս. Տերտերյանը մեկ անգամ ևս նշեց, որ այս ծրագրում արձանագրված թերությունները նման են նախորդներին:

Ս. Տերտերյանն անդրադառնալով ներքին աուդիտի ընթացքում իրականացված համադրման աշխատանքներին՝ նշեց, որ կազմակերպությունում շահառուները բնակվում են առանց այնտեղ հաշվառվելու, միաժամանակ հաշվառված են լինում իրենց նախկին բնակության վայրում:

Ա. Ասատրյանը կարևորելով նշված հարցը, ընդգծեց, որ կազմակերպության շահառու հանդիսացող անձինք պետք է պարտադիր հաշվառված լինեն տվյալ կազմակերպությունում: Նշեց նաև, որ շահառուները կազմակերպությունում պետք է ընդգրկվեն ոչ միայն սոցիալական ծառայություններ տրամադրող մարմինների կողմից տրամադրված ուղեգրերի հիման վրա, այլ նրանց կողմից պետք է իրականացվի դեպքի վարում, որի արդյունքների հիման վրա կուղեգրվեն կազմակերպություն:

«Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի տնօրեն Մ. Օհանյանը ներկայացրեց, որ համաձայն «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի դրույթների՝ կազմակերպությունում բնակվող թվով 22 շահառուներն արդեն իսկ հաշվառված են կազմակերպությունում:

4. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում ապրիլից մինչև հոկտեմբերի 15-ը համակարգի ՊՈԱԿ-ներում իրականացված գնումների գործընթացի ներքին աուդիտի արդյունքներով բացահայտված խախտումների և ներկայացված առաջարկությունների մասին:

(Ա. Ասատրյան)

Նախարարը նշեց, որ ժամանակի սղության պատճառով անհրաժեշտություն է առաջացել հետաձգել օրակարգի չորրորդ հարցի քննարկումը, իսկ վերջինիս անդրադառնալու անհրաժեշտության դեպքում կնշանակվի լրացուցիչ օր:

Ս. Տերտերյանն անդրադառնալով նշված հարցին՝ առաջարկեց օրակարգի չորրորդ հարցն ընդունել ի գիտություն, քանի որ վերջինս արդեն իսկ քննարկվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հետ:

ՀԱՆՁՆԱՐԱՐՎԵՑ

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Թ.Ավետիսյանին՝

1.1 Ապահովել «08. ՀՀ մարզերում միայնակ տարեցներին, հաշմանդամներին տնային պայմաններում» և «տարեցների ցերեկային կենտրոններում սոցիալական սպասարկում» ծրագրերի տարանջատման գործընթացը, ինչպես նաև հաշվի առնելով ակնկալվող արդյունքը՝ հստակեցնել վերոնշյալ ծրագրերով նախատեսված չափորոշիչները, միաժամանակ ՀՀ ֆինանսների նախարարության հետ համատեղ քննարկել տարանջատման արդյունքում առաջ եկող ֆինանսական հետևանքները և այն արտացոլել ՀՀ 2018թ. պետական բյուջեի կատարումն ապահովող ՀՀ օրենքի նախագծում:

Ժամկետ՝ 1 օր

1.2 «Ծերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N 730-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու նպատակով քննարկել և ներկայացնել ամբողջական առաջարկություններ:

Ժամկետ՝ մեկ շաբաթ

1.3 «08. ՀՀ մարզերում միայնակ տարեցներին, հաշմանդամներին տնային պայմաններում» և «տարեցների ցերեկային կենտրոններում սոցիալական սպասարկում» ծրագրով նախատեսված ծառայությունների պատվիրակումն մրցույթային կարգով իրականացնելու նպատակով ամփոփել կատարված աշխատանքները և ներկայացնել համապատասխան իրավական ակտերի նախագծեր՝ սահմանելով կազմակերպությունների ընտրության, ինչպես նաև ծառայությունների մատուցման հստակ առարկայական չափանիշներ (չափորոշիչներ):

Ժամկետ՝ 10 օր

2. **ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանին՝**

2.1 Վերանայել ՀՀ կառավարության 2007թ. մայիսի 31-ի N730-Ն և ՀՀ կառավարության 2016թ. սեպտեմբերի 25-ի N1112-Ն որոշումները, հստակեցնելով և տարանջատելով խնամքի տրամադրման ծառայություններ հայցող և սնունդ ստացող շահառուների խմբերը, սահմանել նրանց տրամադրվող սոցիալական ծառայությունների տեսակներն ու ծավալը և ներկայացնել համապատասխան իրավական ակտերի նախագծեր:

Ժամկետ՝15 օր

2.2 Նախարարության ենթակայությամբ գործող պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ներկայացվող հաշվետվությունների ներկայացման գործընթացը արդիականացնելու նպատակով քննարկել և նախարարի հաստատմանը ներկայացնել ՀՀ ԱՍՀՆ նախարարի 01.02.2007 թվականի թիվ 21-Ա/1 հրամանում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին հրամանի նախագիծ:

Ժամկետ՝10 օր

3. **Նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Ս.Տերտերյանին՝**

Նախարարի հաստատմանը ներկայացնել հրամանի նախագիծ՝ ուսումնասիրված ծրագրերի ներքին աուդիտի արդյունքներով բացահայտված խախտումների վերացման և ներկայացված առաջարկությունների կատարման ժամանակացույցի մասին:

Ժամկետ՝3 օր

4. **Նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ Ա.Կեսոյանին, սոցիալական աջակցության վարչության պետ Ա. Մինասյանին՝**

Ուսումնասիրել և մանրամասնել տուն-ինտերնատներ ուղեգրվող շահառուների ուղեգրերի ձևը՝ հիմքում ներդնելով կարիքների գնահատումը և դեպքի վարումը:

Ժամկետ՝10 օր

5. Նախարարության աշխատակազմի տարեցների եվ հաշմանդամների հիմնահարցերի վարչության պետ Ա.Կեսոյանին

Կենսաթոշակի գործի տեղափոխման և վճարման դադարեցման գործընթացը էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով իրականացնելու նպատակով գործող ընթացակարգերի փոփոխության վերաբերյալ ներկայացնել կոնկրետ առաջարկություն:

Ժամկետ՝ 8 օր

6. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ Ա.Պետրոսյանին, նախարարի տեղակալ Թ.Ավետիսյանին և աշխատակազմի ղեկավար Ա.Գրիգորյանին՝

Յուրաքանչյուրին իր համակարգման ոլորտի մասով կազմակերպել քննարկումներ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող ՊՈԱԿ-ներում իրականացված գնումների գործընթացի ներքին աուդիտի արդյունքների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում վերոնշյալ հարցին լրացուցիչ անդրադառնալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքին աուդիտի կոմիտեի առաջիկա նիստի ընթացքում:

Ժամկետ՝ 15 օր

Կոմիտեի նախագահ՝ Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

Կոմիտեի անդամներ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ս. ՍԱՀՅԱՆ

Թ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ս. ՏԵՐՏԵՐՅԱՆ